

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԸ ԵՎ ԲԱՌԱՍՏԵՎԵՐԸ
ՂԱՅԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀՔԵՒԱԹՆԵՐՈՒՄ

Ա.Յու. Սարգսյան

Գնդարկվածության գրականության մեջ բարբառային և ժողովրդաստեղծական բառերի ու բառածնների գործածության մասին քննադատական գրականության մեջ արտահայտվել են իրարանցիկ կարծիքներ: Այժմյանը անհայտն է, ինչպես է համարում նման ձևերի գործածությունը՝ գտնելով, որ «ժողովրդական բարբառները գրողի համար պետք է լինեն լույս հույս, նորից և նորից, իսկ գեղեցիկ գրականությանը ծառայող հեղինակը պետք է գրի միայն գրականական բարբառով (լեզվով)»: Դրան հակառակ՝ դասական շատ գրողներ, կարևորելով խնդրոստեղծական բառերի և բառածնների անհրաժեշտությունը, մեծապես օգտվել են մայրենի բարբառների ու խոսվածքների հարստությունից, ինչպես Արսևյանը՝ Արարատյան, Թումանյանը՝ Լուսին, Իսահակյանը՝ Կարեն, Բակունցը՝ Գորիսի, իսկ Սայաթ-Նովան ու Մուրադյանը՝ հիմնականում ատենագրորեն և թիֆլիսի բարբառով:

Ղազարոս Աղայանի հեղինակներում հաճախ են հանդիպում բարբառային բառեր և բառածններ, որոնց աղբյուրը մեծ գրողի մայրենի՝ Բոլնիս-Լաչանի խոսվածքն է, որը հանդիսանում է Ղազարաղի բարբառի խոսվածքներից մեկը:

Հեղինակի գործածած բարբառային բառերը պայմանավորված են կարելի է բաժանել երկու խմբի.

ա/ գրական հայերենում համարվածներ ունեցող բառեր

բ/ բառեր, որոնց համարվածները չկան գրական հայերենում

Առաջին խմբի բառերից են՝ *բաժինը* (օժիտ), *գինահարվել* (սարսալ), *գոլ* (շերտ), *ժնգնել* (ծանածել), *կակուղ* (փախուկ), *կոտիպուզ* (գլուխկոծի), *կոնյան* (կարթածոտ), *մարմնար* (մարմարոտ), *մրճընկ* (խճճվել), *շառնաղաղ* (մշուշ), *շիկնք* (վիզ), *չառնուկ* (ծանկնել), *ջգրացնել* (զայրացնել), *տատմար* (մանկաբարձուհի), *տափ* (ցնտի, դաշտ), *տրխատան* (տրխաթել), *օշաղի* (վիշապ): Նման բառերի տեղին գործածությունը ավելի ակնառու երևում է խոսքի մեջ, ինչպես. *Երեք օրից հետո ճանաչա դրին մեծ բաժնի ու բաժինը* (էջ 73): *Յոթը լուսն քամակին, Սև բերդումը Անտես-Աննիայի հսկա նորարարները մեծ տոն էին կատարում իրենց արած հաղթություններին համար* (էջ 68): *Քաղաքների տները ընտիր ճղճողն են, ինչ գաղղ ու գաղղարանք, որ պետք էր հարս ու փնայի համար...* (էջ 29): *Նրանք էլ այնպես հախճողն աղբակնը և այնպես կուլ տալին, որ միայն մի պուտ արյուն կաթնք տերևի վրա* (էջ 28): *Այբերը գտա, բայց ինչպե՞ս ստղացնեմ* (էջ 23): ... *Իրանց ուտելու բաժինը վերցրին մի ջոկ անասուն, տարան հաց բոլորեցին մեջը և սկսեցին ուտել* (էջ 21): ... *Աղապհին իսկույն մի կարմիր խնձոր դառավ ու վաղը ընկավ մի տան հերթից* (էջ 82): ... *Պետք է իմանային լավ ձի հեծնել, լավ վազել, լավ լողալ, ծառերի վրա մագլցել, պատակների ու ժայռերի վրա բարձրանալ* (էջ 20):

Բավական է ընդգծված *բաժինը*, *քամակ*, *ճղճողն*, *հախճել*, *պուտ*, *ստղացնել*, *ջոկ*, *հերթ*, *պատակ* բարբառային բառերը փոխարինել գրական համարվածներով՝ *օժիտ*, *հնոս*, *կտորեղեն*, *խլել*, *կաթիլ*, *առողջացնել*, *առնոճիկ*, *նրդիկ*, *սպառաժ*, հեղինակի և նրա հերոսների խոսքի նրանքը կփոխվի՝ խոսքը դարձնելով ոչ հյույժեղ ու արհեստական:

Առավել տեղին են գործածված գրական հայերենում համարվածներ չունեցող բառերը՝ որոնք բարբառներում ստեղծված կամ նրանց հնչյունական հիմքին համապատասխան փոխված ու իմաստավորված միավորներ են՝ *աղանջաբանուկ* (ուրախ լուրի ավետում), *արխաջոր* (առվի ջուր), *գաթաթի* (գաթա թուղ), *թաթաշոր* (մանկան ձեռքերը բարտրելու շոր), *թանթուկ* (կենդանիների աջակ ոտքերի թաթը), *խաշու* (լոբալ, մսով և այլն ջրալի կերակուր), *ծննդակ* (նորածին երեխայի մայր), *կռատուն* (հեղանոսական տաճար), *հետկանին* (նրկուրդ կինը), *մադի* (էգ թռչուն), *պոխորակով* (էգ պախար) և այլն:

Դժվար թե հնարավոր լինի դրանց փոխարեն օգտագործել իմաստով շատ թե քիչ մոտ որևէ բաժն առանց աղավաղելու գրողի խոսքի գեղարվեստական հատկանիշները, ինչպես նաև իմաստը: Բերենք օրինակներ.

Գլուխն աղաթի թռններն էլ, թուրաւ չորս կողմով բոլորված, իրանց տատին էին հերթաջ ասել տալիս՝ ականջ դնում (էջ 5): *Գլուխի աղբկերը նկնլ էին աղբուրից ջուր տանելու և հերթով*

լցնում էին կրծքներն ու փառքները (էջ 91): Այ մարդ, նա կարծում էի, թե դու սովորականից շատ նա ուտում, էնքան որ նա քաղցած մնում (էջ 21): Կույրները չխնայեցան, որ մի նոր հացընկեր ունեն, և թեև չկշտացան այս անգամ, բայց ծայր չխանցեցին (էջ 21):

Թերևս այս խմբի մեջ պետք է ներառել նաև բարբառային այն հարապատկերները, որոնց համարվածները գրական հայերենում առանձին բառեր են, ինչպես՝ *թափազա ամեն* (մատուցել, հրավերել), *լոր-լոր անել* (ցատկել, թռչկոտել), *կանաչ-կարմիր* (ծիածան), *հաբու տալ* (պղծախարել), *չափ ընկնել* (արշավել, ստրպել), *կախ անել* (կախել), *բոլորա տալ* (հուսադրել), *լախառնաչի տալ* (շատախոսել), *այնուր չգցել* (անտեսել), *քացի-քացի անել* (քազահարել), *հույ տալ* (սնդմել), *դադա անել* (տրտմել):

Բարբառային բառերի շարքին կարելի է դասել մի շարք անծանոթներն ու մականուններն՝ *Օձամանուկ*, *Ջանգի-Ջուճգի*, *Այծատուր*, *Մանուկ-խան*, *Ասլան-Բալա*, *Գյուլնազ տատ*, *Ուլալ*, *Արևամանուկ*, *Պախլատուր*, որոնք հեղինակի կողմից գործածվել են այնպես, ինչպես ընդունված է նեղ ժողովրդի մեջ, կամ է ներթափվել են մշակման՝ համապատասխանեցնելով նկարագրվող դեմքերին և հերոսների խոսելակերպին:

Աղայանի հեքիաթներում ստվար թիվ են կազմում նաև արևելյան լեզուների բառերը.

Մոր քույրն իր բուրբան ստացել է... (էջ 68): *Այսպիսի մի փախճան է ունեցել և Լոխման հերթին* (էջ 87): *Բազմ դասած Ուխայր... աշղը դառավ և սազը ծնորթի մտավ հարսանքատուն* (էջ 83): *Դերվիշ էր դառնում և չանաղը ծնորթ առած նրդում, փայ ուզում...* (էջ 78): *Նորափնասն յուր մակարներով սննդան էին նստած և ուրախություն էին անում* (էջ 82): *Նորափնիս առաջին, ինչպես սովորություն է, շատ սրգնելու կար, որ բերել էին բարեկամները իջրև թազավորի մազա* (էջ 82): *Այս որ լսեց բժիշկը ունեյին (մաշան) դեն գցեց և դուրս եկավ* (էջ 85): *Այդպիսի բառեր են նաև՝ փալիք* (բախտագուշակ), *շայիր* (բանաստեղծ), *չառնար* (արքայած), *հավուզ* (ջրավազան), *հարթոնի* (ավազակ), *դոյ* (խոյ), *դումաշ* (մետաքս) և այլն:

Նատկանշական է, որ հեքիաթներում ռուսներնից և վերջինիս միջոցով նվորդական լեզուներից փոխառված բառեր գրեթե չկան, ինչպես.

Ուխայր մի ճարպիկ ծնունտով էր, այսինքն՝ աչքակալ, ֆոկուսնիկ... (էջ 75):

Սակայն որևէ գրողի գործածած փոխառյալ բառերի մասին խոսելիս «պետք է խստորեն տարբերել նախ իր՝ գրողի կատարած փոխառությունը օտար լեզվից և այն փոխառությունը, որ ոչ թե գրողը, այլ բարբառն է կատարել»²: Վերը բերված օրինակները հիմք են տալիս ասելու, որ փոխառյալ այդ բառերը Աղայանը վերցրել է ոչ թե փոխառու լեզուներից, այլ մայրենի բարբառից, հետևաբար դրանք կարելի է համարել բարբառային-փոխառյալ բառեր:

Աղայանը մեծ տեղ է տվել նաև բարբառային բառաձևերին և քերականական ձևերին, ինչպես՝ *բալանիք* (բանալիներ), *սուկիք* (սովինկո), *ժխանք* (ձիեր), *աղջկերք* (աղջիկներ), *աշունքավա* (աշան), *կոխքուր* (կողոք), *առաջն* (առջևը), պառավը մեկ օր այժի հետ գնաց *ռչխարը* (ռչխարները արածվու տներ): ինձ ուղարկեցեք *տավար* (տավար արածեցնելու):

Ներիաթներին առանձին փայլ են տալիս բարբառային ու ժողովրդական բազմաթիվ դարձվածքներ, ինչպես՝ *փուտ անուն* (մականուն), *մարդու գնալ* (ամուսնանալ), *մինչև նրկինք բարձրացնել* (փառաբանել), *հացը կտրել* (ապրուստից զրկել):

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է ասել, որ Աղայանի հեքիաթներում բարբառային բառերի, բառաձևերի, քերականական ձևերի, դարձվածքների առատությունը նրան մի կողմից պայմանավորված է հեքիաթների ժանրային բնույթով, մյուս կողմից արդյունք է հեղինակի միտումնավորության՝ նոր գրական լեզուն հարստացնելու, ինչպես նաև իր խոսքը ավելի ժողովրդական դարձնելու համար:

Резюме

В работе представлены диалектические слова и формы слов, использованные в сказках одного из выдающихся представителей армянской литературы - Газароса Агаяна.

Отдельными группами представлены те диалектические слова, которые имеют и не имеют аналогов в литературном армянском языке. А также фразеологизмы, заимствованные из восточных языков слова.

Գրականություն

1. Այդ և մյուս օրինակների համար տե՛ս Ղ.Աղայան, Ներիաթներ, Ե., 2004:
2. Տե՛ս Դ.Իշխանյան, Բակուրցի լեզվական արվեստը, Ե., 1965, էջ 91:

ԱրԴՏ, հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն